Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2006թ. նոյեմբերի 24-ին ստորագրված «ԱՊՀ մասնակից պետությունների միջազգային ավտոմոբիլային փոխադրողների լրացուցիչ ուսուցման և մասնագիտական հմտությունների պահանջների ներդաշնակեցման մասին» համաձայնագրի հայերեն պաշտոնական թարգմանությունն է:

Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ԱՊՀ մասնակից պետությունների միջազգային ավտոմոբիլային փոխադրողների լրացուցիչ ուսուցման և մասնագիտական հմտությունների պահանջների ներդաշնակեցման մասին

Սույն Համաձայնագրի մասնակից պետությունները՝ ի դեմս կառավարությունների, այսուհետև՝ Կողմեր,

ելնելով միջազգային ավտոմոբիլային փոխադրողների մասնագիտական պատրաստվածության և իրավասության ներդաշնակեցված պահանջների ստեղծման անհրաժեշտությունից,

նպատակ ունենալով իրագործելու՝

2003 թվականի սեպտեմբերի 18-ի՝ Միջազգային ավտոմոբիլային բեռնափոխադրումների բնագավառում ԱՊՀ մասնակից պետությունների փոխգործակցության մասին համաձայնագիրը,

2004 թվականի սեպտեմբերի 15-ի՝ ԱՊՀ կառավարությունների ղեկավարների խորհրդի որոշմամբ հաստատված՝ 2010 թվականի ժամանակահատվածի համար նախատեսված ԱՊՀ անդամ մասնակիցների համաձայնեցված տրանսպորտային քաղաքականության հայեցակարգը,

համաձայնեցին ներքոնշյալի մասին.

Հոդված 1

Սույն Համաձայնագրում օգտագործվող հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը.

միասնական ծրագրեր՝ լրացուցիչ ուսուցման և մասնագիտական հմտությունների միասնական պահանջներին համապատասխան մշակված և Կողմերի իրավասու մարմինների կողմից միջազգային ավտոմոբիլային փոխադրումների լրացուցիչ ուսուցման բնագավառում հաստատված՝ մասնագիտական հմտության լրացուցիչ ուսուցման ծրագրեր,

մասնագիտական հմտություն՝ միջազգային ավտոմոբիլային փոխադրումների կազմակերպման համար անհրաժեշտ գիտելիքների, հմտությունների և փորձի ընդհանրություն,

ավտոմոբիլային տրանսպորտի բնագավառում իրավասու մարմիններ՝ ավտոմոբիլային փոխադրումների ոլորտում պետական կարգավորում իրականացնող՝ ԱՊՀ մասնակից պետությունների կառավարման մարմիններ,

միջազգային ավտոմոբիլային փոխադրողների լրացուցիչ ուսուցման բնագավառում իրավասու մարմիններ՝ միջազգային ավտոմոբիլային փոխադրողների մասնագիտական հմտությունների լրացուցիչ ուսուցման ոլորտում պետական կարգավորում իրականացնող՝ ԱՊՀ մասնակից պետությունների կառավարման մարմիններ,

միջազգային ավտոմոբիլային փոխադրող՝ տվյալ Կողմի ազգային օրենսդրությանը համապատասխան՝ միջազգային հաղորդակցությունում ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների և բեռների փոխադրում իրականացնող Կողմի իրավաբանական կամ ֆիզիկական անձ,

մասնագիտական հմտությունների պահանջներ՝ միջազգային ավտոմոբիլային փոխադրումների հմտությունների մակարդակի հիմնական պահանջները սահմանող փաստաթուղթ,

լրացուցիչ ուսուցման և մասնագիտական հմտությունների պահանջներ՝ միջազգային ավտոմոբիլային փոխադրողների մասնագիտական հմտությունների լրացուցիչ ուսուցման ծրագրերի նվազագույն բովանդակության հիմնական պահանջները սահմանող փաստաթուղթ:

Հոդված 2

Սույն Համաձայնագիրը կարգավորում է միջազգային ավտոմոբիլային փոխադրողների լրացուցիչ ուսուցման և մասնագիտական հմտությունների պահանջների ներդաշնակեցումը:

Հոդված 3

1. ԱՊՀ Տնտեսական խորհրի կողմից հաստատված լրացուցիչ ուսուցման և միջազգային ավտոմոբիլային փոխադրողների հմտությունների միասնական պահանջների հիման վրա Կողմերի իրավասու մարմինները միջազգային ավտոմոբիլային փոխադրողների լրացուցիչ ուսուցման ոլորտում մշակում են միասնական ծրագրեր:

2. Մասնագիտական հմտությունների լրացուցիչ ուսուցման միասնական պահանջների առաջարկվող ցանկը ներկայացված է սույն Համաձայնագրի անբաժանելի մաս կազմող 1-ին հավելվածում:

Հոդված 4

1. Միջազգային ավտոմոբիլային փոխադրողների լրացուցիչ ուսուցումն իրականացվում է Կողմերի իրավասու մարմինների լիազորած ուսումնական հաստատությունների կողմից՝ միջազգային ավտոմոբիլային փոխադրողների լրացուցիչ ուսուցման բնագավառում և ավտոմոբիլային տրանսպորտի բնագավառում:

Կողմերի իրավասու մարմինները միջազգային ավտոմոբիլային փոխադրողների լրացուցիչ ուսուցման բնագավառում սահմանում են այդպիսի ուսումնական հաստատությունների ցանկը:

2. Միջազգային ավտոմոբիլային փոխադրողների մասնագիտական հմտությունների լրացուցիչ ուսուցում իրականացնող ուսումնական հաստատությունների ցանկի որոշման առաջարկվող կարգը ներկայացված է սույն Համաձայնագրի անբաժանելի մաս կազմող 2-րդ հավելվածում:

Հոդված 5

Միջազգային ավտոմոբիլային փոխադրողի մասնագիտական հմտությունները հաստատվում են միջազգային ավտոմոբիլային փոխադրողների լրացուցիչ ուսուցման բնագավառում Կողմի իրավասու մարմնի կողմից տրվող՝ սահմանված նմուշի հավաստագրով՝ միջազգային ավտոմոբիլային փոխադրողների լրացուցիչ ուսուցում իրականացնող Կողմերի ուսումնական հաստատություններից մեկում միասնական ծրագրերով ուսուցման ու ատեստավորման և որակավորման քննություն հանձնելուց հետո:

Որակավորման քննության անցկացման կարգը սահմանվում է ավտոմոբիլային տրանսպորտի բնագավառում Կողմերի իրավասու մարմինների կողմից:

Հոդված 6

1. Կողմերն ընդունում և փոխադարձաբար ճանաչում են իրենց իրավասու մարմինների կողմից տրված հավաստագրերը:

2. Հավաստագիրը ավտոմոբիլային տրանսպորտի բնագավառում Կողմերի իրավասու մարմինների կողմից ճանաչվում է համապատասխան ազգային հավաստագրերին հավասար:

Հոդված 7

1. Հավաստագրի ձևաթղթերը տպագրվում են ռուսերեն՝ միջազգային ավտոմոբիլային փոխադրողների լրացուցիչ ուսուցման բնագավառում Կողմերի լիազոր մարմինների կողմից:

Հավաստագրերը կարող են կրկնօրինակվել յուրաքանչյուր Կողմի պետական լեզվով՝ հավաստագրի սահմանված ձևաչափը և դրա կետերի տեղերը պահպանելու պայմանով: Հավաստագիրը պատրաստվում է տպագրական մեթոդով և ունի պաշտպանվածության համակարգ:

2. Հավաստագրի ձևին ներկայացվող պահանջները նշված են սույն Համաձայնագրի 3-րդ հավելվածում:

Հոդված 8

Ավտոմոբիլային տրանսպորտի բնագավառում Կողմերի իրավասու մարմինների տեղեկատվական աջակցությունը և գործունեության համակարգումը առաջարկության ձևաչափով իրականացնում է ԱՊՀ մասնակից պետությունների Համակարգող տրանսպորտային հանդիպման ավտոմոբիլային տրանսպորտի Խորհուրդը:

Հոդված 9

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում այն ստորագրած Կողմերի՝ բոլոր ներպետական ընթացակարգերը կատարելու մասին երրորդ ծանուցումը ավանդապահին ի պահ հանձնելու օրվանից:

Անհրաժեշտ ընթացակարգերն ավելի ուշ կատարած Կողմերի համար այն ուժի մեջ է մտնում ավանդապահին համապատասխան փաստաթղթերն ի պահ հանձնելու օրվանից:

Հոդված 10

Սույն Համաձայնագրում Կողմերի փոխադարձ համաձայնությամբ կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք կձևակերպվեն առանձին արձանագրություններով, ուժի մեջ կմտնեն սույն Համաձայնագրի 9-րդ հոդվածի դրույթներին համապատասխան և կհամարվեն սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

Հոդված 11

Սույն Համաձայնագրի կիրառման և/կամ մեկնաբանման հետ կապված վիճելի հարցերը լուծվում են շահագրգիռ Կողմերի միջև՝ բանակցությունների միջոցով:

Հոդված 12

Սույն Համաձայնագիրը գործում է ուժի մեջ մտնելու օրվանից 5 տարվա ընթացքում: Այդ ժամկետը լրանալուց հետո սույն Համաձայնագիրն ինքնաբերաբար երկարաձգվում է հաջորդող հնգամյա ժամանակահատվածներով, եթե Կողմերն այլ որոշում չեն ընդունում:

Սույն Համաձայնագրի գործողությունը կարող է դադարեցվել Կողմերի ցանկությամբ, եթե Համաձայնագրից նրանց դուրս գալու հետևանքով դրա մասնակիցների թիվը դառնա երեքից պակաս:

Հոդված 13

Սույն Համաձայնագիրը բաց է Անկախ Պետությունների Համագործակցության այլ մասնակից պետությունների միանալու համար և համարվում է նրանց համար ուժի մեջ մտած միանալու մասին համապատասխան ծանուցումը ավանդապահին փոխանցելու օրվանից:

Սույն Համաձայնագիրը բաց է Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից չհանդիսացող այն երրորդ պետությունների համար, որոնք ընդունում են դրա նպատակներն ու սկզբունքները, և համարվում է ուժի մեջ մտած, եթե Կողմերից ոչ մեկը դեմ

չի արտահայտվում այդպիսի միացմանը երեք ամսվա ընթացքում՝ ավանդապահի կողմից համապատասխան ծանուցում ուղարկվելու օրվանից:

Հոդված 14

Յուրաքանչյուր Կողմ կարող է դուրս գալ սույն Համաձայնագրից՝ այդ մասին ավանդապահին ծանուցում ուղարկելով ոչ ուշ, քան դուրս գալու օրվանից 6 ամիս առաջ:

Կատարված է Մինսկ քաղաքում 2006 թ. նոյեմբերի 24-ին, մեկ բնօրինակով՝ ռուսերեն: Բնօրինակը պահվում է Անկախ Պետությունների Համագործակցության գործադիր կոմիտեում, որը սույն Համաձայնագիրն ստորագրած յուրաքանչյուր պետության կուղարկի վերջինիս վավերացված պատճենը:

Ադրբեջանի Հանրապետության
Կառավարության կողմից

Մոլդովայի Հանրապետության
Կառավարության կողմից

Հայաստանի Հանրապետության
Կառավարության կողմից

Ռուսաստանի Դաշնության
Կառավարության կողմից

Բելառուսի Հանրապետության
Կառավարության կողմից

Տաջիկստանի Հանրապետության
Կառավարության կողմից

Վրաստանի
Կառավարության կողմից

Թուրքմենստանի
Կառավարության կողմից

Ղազախստանի Հանրապետության
Կառավարության կողմից

Ուզբեկստանի Հանապետության
Կառավարության կողմից

Ղրղզստանի Հանրապետության
Կառավարության կողմից

Ուկրաինայի
Կառավարության կողմից

Հավելված 1

«ԱՊՀ մասնակից պետությունների միջազգային
ավտոմոբիլային փոխադրողների լրացուցիչ

ուսուցման և մասնագիտական հմտությունների առնչությամբ
պահանջների ներդաշնակեցման մասին»
համաձայնագրի

ՑԱՆԿ

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ

Մոդուլ. ԻՐԱՎԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ
Միջազգային ավտոմոբիլային հաղորդակցության ընդհանուր պայմաններ

Քննարկվող հարցեր

- ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովը, Ավտոմոբիլային տրանսպորտի միջազգային միությունը,
- Միջազգային տրանսպորտային կոնվենցիաները.

– ճանապարհային երթևեկության, ճանապարհային նշանների ու ազդանշանների մասին համաձայնագրեր և կոնվենցիաներ,
– մաքսային կոնվենցիա,
– միջազգային բեռների փոխադրման պայմանագրի մասին կոնվենցիա (ՄԲՓՀ–ՄՏԱ),
– բեռների առանձին տեսակների միջազգային ավտոմոբիլային փոխադրումների մասին համաձայնագրեր,
– միջազգային փոխադրումների իրականացման ընթացքում ավտոտրանսպորտային միջոցների անձնակազմերի աշխատանքի և հանգստի ռեժիմի մասին համաձայնագիր:

- Միջազգային ավտոմոբիլային փոխադրումների իրավական կարգավորումը և թույլտվության համակարգը.

– միջազգային ավտոմոբիլային հաղորդակցության մասին երկկողմ միջկառավարական համաձայնագրեր,
– բազմակողմ կոնվենցիաներ և համաձայնագրեր,
– ներքին օրենսդրության նորմեր:

- ԱՊՀ մասնակից պետություններում միջազգային ավտոմոբիլային փոխադրումների պահանջների մասին հիմնական տեղեկությունները:

Ունկնդիրների կողմից նյութի ընկալման որակի չափանիշները

Թեմա	ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐ պետք է → բանավոր և գրավոր
Միջազգային տրանսպորտային կենվենցիաներ Իրավական կարգավորում	Փոխանցեն > Հիմնական միջազգային կոնվենցիաները Սահմանեն > Թույլտվության համակարգի էությունը > «կաբոտաժ» հասկացությունը

Մոդուլ. ԻՐԱՎԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

Միջազգային փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների և անձանց գործունեության լիցենզավորում, միջազգային ավտոփոխադրումների իրականցման թույլտվություն

Քննարկվող հարցեր.

- Լիցենզավորման պահանջները:
- Լիցենզավորվող գործունեության համար տրանսպորտային միջոցները:
- Էկոլոգիական պահանջներ, որոնք ենթակա են պահպանման լիցենզավորման ժամանակ:
- Լիցենզիայի տրման պայմանները:
- Լիցենզիա տալը մերժելու պատճառները:
- Լիցենզիայի երկարաձգումը:
- Լիցենզիան ուժը կորցրած ճանաչելը:
- Միջազգային ավտոփոխադրումներ իրականացնելու թույլտվությունը կանոնակարգող ազգային նորմատիվ իրավական փաստաթղթերը:

Ունկնդիրների կողմից նյութի ընկալման որակի չափանիշները

Թեմա	ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐ Պետք է → բանավոր և գրավոր
Լիցենզավորում	Թվարկեն > Լիցենզավորվող փոխադրումների համար տրանսպորտային միջոցները Մեկնաբանեն > Լիցենզիայի տրամադրման չափանիշները Նկարագրեն > Լիցենզիայի տրամադրման դիմումների, լիցենզիայի թարմացման, տրամադրումը մերժելու ընթացակարգերը Ձևակերպեն > ԱՏՁ-ի էկոլոգիական պահանջները Նկարագրեն > Միջազգային ավտոփոխադրումներ իրականացնելու համար թույլտվություն տալու կարգը

Մոդուլ. ԻՐԱՎԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

Պայմանագրի կնքում

Քննարկվող հարցեր.

- Փոխադրման պայմանագիր կազմելու սկզբունքները:
- Պայմանագրի կառուցվածքը.

– ավտոմոբիլային փոխադրման պայմանագրի անվանում,
– պայմանավորվող կողմեր,
– պայմանագրի առարկա,
– վճարման գին և պայմաններ,
– պարտականությունների կատարման ժամկետ, պայմանագրից միակողմանի հրաժարում,
– փաթեթավորում, փոխադրում, ապահովագրում,
– սեփականության իրավունքի փոխանցում, սեփականության իրավունքի փոխանցման պայմանների վերապահումներ,
– ֆորս մաժոր, անհաղթահարելի ուժ,
– երաշխավորություն, ապրանքի համար պատասխանատվություն, երաշխիքներ,
– վնասի փոխհատուցում, պայմանական տուգանք,
– գործառքի կնքման ընդհանուր պայմաններ,
– գործող իրավակարգ,
– պաշտոնական պահանջներ, հատկապես պայմանագրում լրամշակումների կատարման ընթացքում,
– արբիտրաժ, իրավասության մասին պայմանավորվածություն,
– պայմանագրի պայմաններից բխող ծախսեր:

- Փոխադրողի իրավունքներն ու պարտականությունները:
- Փոխադրողի պարտականությունը.

– պայմանագիրը կամ գործարքը խախտելու հետ կապ չունեցող իրավախախտումներ, որոնք հիմք են տալիս հայցադիմում ներկայացնելու համար,
– ԻՆԿՈՏԵՐՄԶ-2000՝ արտաքին առևտրում մատակարարման պայմանների մեկնաբանման միջազգային կանոններ:

Ստացված գիտելիքների և հմտությունների որակի չափանիշները

Թեմա	ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐ պետք է → բանավոր և գրավոր
Իրավական նորմերի հիմունքներ Օրինական ուժ ունեցող պայմանագիր Փոխադրողի իրավունքները,	Թվարկել > Գործարքի հոդվածները Կազմել > Բեռի փոխադրման պայմանագիր Ձևակերպել > Փոխադարձ պարտավորությունները. փոխադրողի և գործակալի. կապալառուի և ենթակապալառուի. > Հայցադիմումի համար հիմք հանդիսացող

պարտավորությունները և պատասխանատվությունը	իրավախախտումները

Մոդուլ. ԻՐԱՎԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

Հարկեր

Քննարկվող հարցեր.

- Հարկերի մասին ընդհանուր տեղեկությունները:
- Ավելացրած արժեքի հարկը:
- Ազգային հարկային օրենսդրությունը:
- Հարկային հարցերով կոնվենցիաներ:
- Վառելիքի չհարկվող քանակ, որը գտնվում է միջազգային փոխադրում իրականացնող ավտոտրանսպորտային միջոցների բաքերում:

Ունկնդիրների կողմից նյութի ընկալման որակի չափանիշները

Թեմա	ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐ պետք է → բանավոր և գրավոր
Հարկում	Թվարկել > Տրանսպորտային ձեռնարկություններից գանձվող հարկերը Նկարագրել > ԱԱՀ հաշվարկման կարգը Ձևակերպել > ԵՄ օրենսդրության հիմնական դրույթները հարկման ոլորտում

Մոդուլ. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Կառավարում

Քննարկվող հարցեր.

- Կառավարման հիմնական գործառույթները.

– պլանավորում,
– կազմակերպում,
– ղեկավարություն,
– հսկողություն:

- Որոշում ընդունելու գործընթացը:
- Մարդկային ռեսուրսների կառավարում.

– կադրերի ընտրություն,
– աշխատավարձերի և խրախուսանքների համակարգ,
– մոտիվացիայի տեսությունը և դրա կիրառումը պրակտիկայում: (Ավելորդ է)

- Գործնական վարվեցողություն.

– շփում աշխատավայրում,
– խորհրդակցությունների խելամիտ անցկացում,
– գործնական բովանդակային փաստաթղթեր կազմելու կանոններ,
– գործարար անձանց խոսք (ելույթներ):

Ունկնդիրների կողմից նյութի ընկալման որակի չափանիշները

Թեմա	ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐ պետք է → բանավոր և գրավոր
Կառավարում	Մեկնաբանել > Կառավարման հիմնական գործառույթները Բացատրել > Որոշումների ընդունման ալգորիթմը Թվարկել > Առաջնորդի հատկանիշները, ղեկավարման ձևը, խրախուսանքների սկզբունքները, գործունեության խթանման մեթոդները

Մոդուլ. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Մարկետինգի ռազմավարություն

Քննարկվող հարցեր.

- Մարկետինգի հիմնական գործառույթները:
- Մարկետինգային միջավայրը:
- Մարկետինգային հետազոտությունների ալգորիթմը:
- Սպառողական շուկայի վերլուծությունը:
- Շուկայի բաժանումը և ապրանքի տեղադրումը.

– տրանսպորտային փոխադրումների բնագավառում շուկայի հատվածներ:

- Գնագոյացությունը և շահութաբերությունը:
- Փոխադրումների մարկետինգը:
- Արտաքին շուկայի նպատակահարմարությունը:
- Շուկայի ընտրությունը:
- Շուկա մուտք գործելու մեթոդները:

Ունկնդիրների կողմից նյութի ընկալման որակի չափանիշները

Թեմա	ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐ պետք է → բանավոր և գրավոր
Մարկետինգի ռազմավարություն	Ձևակերպել > Մարկետինգի հիմնական գործառույթները Նկարագրել > Շուկայի բաժանման գործընթացը, տեղեկության հավաքումը և մշակումը Թվարկել > Մարկետինգային ռազմավարության կառուցման սկզբունքները տրանսպորային ծառայությունների բնագավառում

Մոդուլ. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Ձեռնարկության գործունեության ֆինանսական վերլուծություն

Քննարկվող հարցեր.

- Ծախսերի գնահատումը:
- Եկամուտների և կորստի մասին հաշվետվությունը:
- Հաշվեկշռային հաշվետվությունը:
- Դրամական հոսքերի շարժը:
- Ձեռնարկության ֆինանսական վիճակի գնահատման չափանիշները.

– իրացվելիություն,
– վճարունակություն,
– սնանկության հնարավորություն:

- Ոչ վնասաբերության գրաֆիկը:

Ունկնդիրների կողմից նյութի ընկալման որակի չափանիշները

Թեմա	ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐ պետք է → բանավոր և գրավոր
Հաշվեկշռային հաշվետվություն	Բացատրել > Հաշվեկշռային հաշվետվության նպատակը > Ինչպե՞ս է ստեղծվում դրամարկղային պլանը Թվարկել > Միջոցների աղբյուրը
Գնահատման չափանիշը	Կատարել > Շահութաբերության և այլ ցուցանիշների հաշվարկ Կառուցել > Ոչ վնասաբերության գրաֆիկը

Մոդուլ. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Քննարկվող հարցեր.

- Ձեռնարկության ներքին և արտաքին ֆինանսավորման աղբյուրները.

– կանոնադրական կապիտալ,
– շահույթ,
– ամորտիզացիա,
– վարկ,
– լիզինգ,
– ֆակտորինգ:

- Ներդրումային որոշման գնահատման չափանիշները.

– ներդրումների վերադարձի ժամկետ,
– շահութաբերության գործակից,
– զուտ իրական արժեք,
– եկամտի ներքին նորմա:

- Ռիսկի գնահատում:

– Ռիսկերի տեսակները.
– ռիսկը զգալու և ոչ վնասաբերության վերլուծություն,
– ծախսերի նպատակահարմարություն,
– հարաբերական ռիսկերի վերլուծություն:

Ունկնդիրների կողմից նյութի ընկալման որակի չափանիշները

Թեմա	ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐ պետք է → բանավոր և գրավոր
Ֆինանսների կառավարում	Բացատրել > Հաշվեկշռային հաշվետվության նպատակը > Ինչպե՞ս է ստեղծվում դրամարկղային պլանը
Հաշվապահական հաշվառում	Թվարկել > Միջոցների աղբյուրը
Հաշվեկշռային հաշվետվություն	Կատարել > Շահութաբերության և այլ ցուցանիշների հաշվարկ

Մոդուլ. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Բիզնես ծրագիր

Քննարկվող հարցեր.

- Բնագավառը, ընկերությունը, արտադրվող ապրանքը:
- Շուկայի հետազոտությունը և վերլուծությունը:
- Բիզնեսի տնտեսություն:
- Մարկետինգային պլան:
- Արտադրանքի ստեղծման և մշակման պլանները:
- Ընկերության կառավարումը:
- Գլխավոր օրացուցային պլանը:
- Կրիտիկական խնդիրներ և ռիսկը:
- Ընկերության հնարավորությունները (առաջարկություններ ներդրողներին):
- Հավելվածները:
- Ամփոփումը:
- Հաշվարկային աշխատանք. միջազգային փոխադրումներ կատարող ձեռնարկության գործունեության բիզնես ծրագիրը:

Ունկնդիրների կողմից նյութի ընկալման որակի չափանիշները

Թեմա	ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐ պետք է → բանավոր և գրավոր
Բիզնես ծրագիր	Բացատրեն > Բիզնես ծրագրի նշանակությունը Թվարկեն > Բաժինները Իրականացնեն > Բիզնես պլանը

Մոդուլ. ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Քննարկվող հարցեր.

- 1958 թվականի Ժնևյան Համաձայնագիրը:
- Ատեստավորման կարգի մասին ԵՄ ուղեցույցները:
- Ավտոմեքենաների ատեստավորումը.

– փոքր բեռնատարողության տրանսպորտային միջոցներ,
– բեռնատրանսպորտային միջոցներ,
– կառուցվածքի, շահագործման, լուսավորման սարքավորումների տեխնիկական պայմաններ,
– գրանցում,
– անձնագրավարում:

- Մեծ բեռնատարողության տրանսպորտային միջոցների փորձարկումը և անձնագրավորումը:
- Վարորդի պատասխանատվությունը ավտոմեքենաների տեխնիկական վիճակի համար:
- Տրանսպորտային միջոցների քաշի բնութագրերը և չափերը:
- Ավտոմեքենաների անվտանգ բեռնումը:
- Ավտոմեքենաների կառուցողական չափանիշների նկատմամբ ԵՄ պահանջները.

– հզորության և քաշի դիապազոն,
– աղմուկի խլացուցիչ,
– արգելակներ,
– արտանետվող գազեր,
– որակյալ ռադիոկապ,
– վառելիքի բաքեր,
– տրանսպորտային միջոցների թույլատրելի եզրաչափեր,
– հայելիներ,
– անվտանգ ապակիներ,
– անվտանգության գոտիներ,
– արագության սահմանափակիչներ,
– արագաչափեր,
– անվադողեր:

- Լուսավորման կանոնները և նշագծումը:

Ունկնդիրների կողմից նյութի ընկալման որակի չափանիշները

Թեմա	ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐ պետք է → բանավոր և գրավոր
Ավտոմոբիլային տրանսպորտի տեխնիկական չափանիշները և շահագործումը	Թվարկել > Ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական ստանդարտներին և շահագործմանն առնչվող՝ ԵՄ-ի օրենսդրական ակտերը Ձևակերպել > Տրանսպորտային միջոցների քաշին և եզրաչափերին վերաբերող հիմնական պահանջները Հիմնավորել > Փոխադրումների տարբեր տեսակների համար տրանսպորտային միջոցների ընտրության չափանիշները

Մոդուլ. ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Քննարկվող հարցեր.

- Միջազգային ավտոմոբիլային փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցների անձնակազմերի աշխատանքին առնչվող՝ 1970 թվականի համաձայնագիր (ECTP):
- Տախոգրաֆներ:
- Վտանգավոր բեռների միջազգային ճանապարհային փոխադրման մասին 1957 թվականի համաձայնագիր (ДОПОГ):

– Բոլոր տեսակի վտանգավոր նյութերի փոխադրման համար կիրառվող ընդհանուր դրույթներ,
– Բեռների փոխադրման միջոց,
– Հատուկ պահանջներ, որոնց պետք է բավարարեն տրանսպորտային միջոցները և դրանց սարքավորումները,
– Ընդհանուր ծառայողական պահանջներ,
– Բեռների բարձման, բեռնաթափման և մշակմանն առնչվող հատուկ դրույթներ,
– Տրանսպորտային համակարգերի շահագործմանն առնչվող հատուկ դրույթներ,
– Որոշ երկրներում գործող անցումային դրույթներ, շեղում կանոններից և հատուկ դրույթներ:

- Ճանապարհների տարբեր տեսակների վրա թույլատրելի արագությունը:
- Դժբախտ պատահարների ձևակերպման ընթացակարգը:
- Ազգային մարմինները և կազմակերպությունները արտասահմանում:

Ունկնդիրների կողմից նյութի ընկալման որակի չափանիշները

Թեմա	ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐ պետք է → բանավոր և գրավոր
	Թվարկել > Վարորդների աշխատանքային ժամերը

Վարորդների աշխատանքային ժամերը	կարգավորող օրենսդրական ակտերը Աշխատանքային ժամերի գրանցման միջոցները
Թույլարտելի արագությունը	Բացահայտել > Տախոգրամները
Վտանգավոր բեռների փոխադրումը	Թվարկել > Ճանապարհների տարբեր տեսակների վրա թույլատրելի արագության դիապազոնները
Դժբախտ պատահարների ձևակերպման ընթացակարգը	Շարադրել > ԴՕՊՕԳ-ի հիմնական դրույթները > Դժբախտ պատահարների ժամանակ գործողությունների հերթականությունը

Մոդուլ. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Անձնագրային-արտոնագրային ձևակերպումներ

Քննարկվող հարցեր.

- Ազգային օրենսդրությունը մուտքի և ելքի կարգի մասին.

– օտարերկրյա անձնագրերի ձևակերպում,
– օտարերկրյա քաղաքացիների մուտքի կարգ:

- Քաղաքացիների ուղևորությունների մասին միջկառավարական համաձայնագրերը:
- ԱՊՀ մասնակից պետությունների սահմանների հատման կարգը.

– առանց վիզայի ռեժիմ ունեցող երկրներ մուտք գործելու փաստաթղթերի ձևակերպում:

- Վիզայի ռեժիմ ունեցող երկրներ մուտք գործելու կարգ. արտասահմանյան պետության վիզայի ձևակերպում:

Ունկնդիրների կողմից նյութի ընկալման որակի չափանիշները

Թեմա	ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐ պետք է → բանավոր և գրավոր
Անձնագրային-արտոնագրային ձևակերպում	Նկարագրել >Անձնագրերի և վիզաների ձևակերպման ընթացակարգերը Ձևակերպել > Վիզայի ռեժիմ ունեցող երկրների տարածքով տարանցիկ անցման կանոնները

Մոդուլ. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սահման. մաքսատուն, վերահսկողության այլ մարմիններ

Քննարկվող հարցեր.

- Սահմանին պետական վերահսկողության տեսակները, հիմնական խնդիրները և գործառույթները:
- Մաքսատան դերը և նրա հիմնական գործառույթները:
- Մաքսատուրքերը, ակցիզները, ավելացված արժեքի հարկը:
- Ներմուծման և արտահանման ժամանակ մաքսային ընթացակարգերը:
- Մաքսային տարանցումը:
- ՄՃՓ գրքույկի կիրառմամբ բեռների միջազգային փոխադրումների մասին մաքսային կոնվենցիան (TIR):
- ՄՃՓ գրքույկը (TIR).

– ՄՃՓ գրքույքի կիրառման կանոններ,
– ՄՃՓ գրքույկի օգտագործման ընթացքում վարորդի պարտականություններ,
– ՄՃՓ գրքույկի մաքսային ձևակերպում:

- Այլ մաքսային համակարգերի մասին տեղեկությունը.

– մաքսային կտրոնային գրքույկ (կարնետ դե պասսաժ),
– «Տ» համակարգ,
– Ժամանակավոր ներմուծման մասին հռչակագրին միացած երկրների համար ԱՏԱ գրքույկ:

- Պարզեցված ընթացակարգերը.

– բեռների մաքսային ձևակերպում,

– այլ ընթացակարգեր:

Ունկնդիրների կողմից նյութի ընկալման որակի չափանիշները

Թեմա	ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐ պետք է → բանավոր և գրավոր
Մաքսատուն	Բնութագրել > Մաքսատան դերն ու գործառույթները Նկարագրել > բեռի ներմուծման և արտահանման ժամանակ ընթացակարգերը Նկարագրել > Տարանցման կանոնները

Մոդուլ. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ

ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ավտոտրանսպորտային ռիսկերի ապահովագրություն

Քննարկվող հարցեր.

● Տնտեսական էությունը և ապահովագրության նպատակները:

● Ապահովագրական ընկերությունների կազմակերպական տեսակները:

● Ապահովագրական ծածկույթի տեսակները:

● Միջազգային տրանսպորտային փոխադրումների ժամանակ բեռների ապահովագրությունը և փոխադրողի պատասխանատվությունը:

● Ապահովագրության պայմանագիրը և դրա առանձնահատկությունները.

– ապահովագրության պայմանագրի կնքման կարգ,
– ապահովագրական պոլիս և դրա բովանդակություն,
– ապահովագրական վճարումների տարիֆիկացում,
– ապահովագրական վճարում կատարելու կարգ և պայմաններ:

● Քաղաքացիական պատասխանատվության ապահովագրության ժամանակ վնասի փոխհատուցման պայմանները և սահմանափակումները:

Ունկնդիրների կողմից նյութի ընկալման որակի չափանիշները

Թեմա	ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐ պետք է → բանավոր և գրավոր
	Նկարագրել > Ապահովագրության տեսակները

Ապահովագրություն	Շարադրել > Ապահովագրության պայմանագրի առանձնահատկությունները

ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՑԱՆԿԸ

փոխադրողի մասնագիտական հմտությունների հավաստագիր ստանալու համար

Մոդուլի անվանումը		Քննություն հանձնողները պետք է կարողանան
Մոդուլ 1. ԻՐԱՎԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ		
1.1.	Միջազգային ավտոմոբիլային հաղորդակցության հիմնական պայմանները	
1.1.1.	Ազգային միջազգային պայմանագրերը Միջազգային հոչակագրերը	ա) Թվարկել հիմնական տրանսպորտային հոչակագրերը և այլ միջազգային ազգային պայմանագրերը: բ) Ձևակերպել փոխադրողի պրակտիկ գործունեությունը կանոնակարգող հիմնական դրույթները:
1.1.2.	Իրավական կարգավորումը և թույլտվության համակարգը	ա) Սահմանել թույլտվության համակարգի էությունը: բ) Ձևակերպել փոխադրողի պրակտիկ գործունեությունը կանոնակարգող ներքին օրենսդրության հիմնական դրույթները: գ) Սահմանել «կաբոտաժ» հասկացողությունը:
1.1.3.	Միջազգային փոխադրողների լիցենզավորումը Միջազգային ավտոփոխադրումների իրականացման թույլտվության կարգը	ա) Սահմանել լիցենզավորման էությունը: բ) Ձևակերպել լիցենզիայի տրամադրման չափանիշները: գ) Նկարագրել դիմողի գործողությունները լիցենզիա ձեռք բերելու համար: դ) Նկարագրել միջազգային ավտոփոխադրումների իրականացման թույլտվության կարգը:

1.1.4. Պայմանագրի կնքումը	ա) Ձևակերպել պայմանագրով նախատեսված փոխադրողի իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը: բ) Թվարկել ռիսկի համար հիմք հանդիսացող իրավախախտումները:
1.1.5. Հարկերը	ա) Նկարագրել ՄԱՓ-ի ժամանակ ԱԱՀ մասհանման և փոխհատուցման կարգը:
Մոդուլ 2. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ	
2.1. Կառավարումը	ա) Թվարկել գործողությունների հերթականությունը ռազմավարական ծրագիրը կազմելու ժամանակ: բ) Սահմանել մոտիվացման էությունը կադրերի հետ աշխատանքի ժամանակ:
Մոդուլի անվանումը	Քննություն հանձնողները պետք է կարողանան
2.2. Մարկետինգի ռազմավարությունը	ա) Ձևակերպել մարկետինգի էությունը և շուկայի ուսումնասիրության մեթոդները:
2.3. Ձեռնարկությունների գործունեության ֆինանսական վերլուծությունը	ա) Բացատրել հաշվեկշռային հաշվետվության նշանակումը: բ) Հաշվարկել ձեռնարկության շահութաբերությունը: գ) Մեկնաբանել դրամարկղային պլանի հոդվածները:
Մոդուլ 3. ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ	
	ա) Թվարկել տրանսպորտային միջոցների քաշերի և եզրաչափերի հիմնական պահանջները: բ) Թվարկել շարժակազմի տարբեր տեսակների առավելությունները, բեռների տարբեր տեսակների փոխադրման համար ընտրության չափանիշները: գ) Թվարկել շարժակազմի պահանջների կատարմանն առնչվող փոխադրողի պարտականությունները ՄԱՓ-ի ժամանակ:
Մոդուլ 4. ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ	
	ա) Թվարկել վարորդների աշխատանքային ժամերը և նրանց աշխատանքի և հանգստի նորմերը կարգավորող օրենսդրական ակտերը: բ) Շարադրել ԴՕՊՕԳ-ի հիմնական դրույթները: գ) Նկարագրել դժբախտ պատահարների ժամանակ գործողությունների հերթականությունը:
Մոդուլ 5. ՄԱՓ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	

5.1. Անձնագրային-արտոնագրային ձևակերպում	ա) Նկարագրել անձնագրերի և վիզաների ձևակերպման ընթացակարգը: բ) Ձևակերպել տարանցիկ անցման կանոնները վիզայի ռեժիմով երկրների տարածքներով:
5.2. Սահման	ա) Նկարագրել ներմուծման և արտահանման ընթացակարգերը: բ) Նկարագրել բեռների մաքսային ձևակերպման ընթացակարգերը: գ) Նկարագրել սահմանում վերահսկման տեսակներն ու խնդիրները:
5.3. Ապահովագրություն	ա) Թվարկել ապահովագրության տեսակները: բ) Ձևակերպել Ավտոմոբիլային տրանսպորտով բեռների միջազգային փոխադրման պայմանագրի մասին հոչակագրի (ՀԴՊԳ) հիմնական դրույթները: գ) Թվարկել վնասի փոխհատուցման պայմաններն ու սահմանափակումները քաղաքացիական պատասխանատվության ապահովագրության ժամանակ:

Հավելված 2
«ԱՊՀ մասնակից պետությունների միջազգային
ավտոմոբիլային փոխադրողների լրացուցիչ
ուսուցման և մասնագիտական հմտությունների առնչությամբ
պահանջների ներդաշնակեցման մասին»
համաձայնագրի

ԿԱՐԳ

Միջազգային ավտոմոբիլային փոխադրողների մասնագիտական հմտությունների լրացուցիչ ուսուցում իրականացնող՝ ԱՊՀ մասնակից պետությունների ուսումնական հաստատությունների ցանկի սահմանումների

1.1. Միջազգային ավտոմոբիլային փոխադրողների մասնագիտական հմտությունների լրացուցիչ ուսուցում իրականացնող՝ ԱՊՀ մասնակից պետությունների կրթական կազմակերպությունների (այսուհետև՝ կրթական կազմակերպություններ) ցանկի սահմանումների կարգը միջազգային ավտոմոբիլային փոխադրողների լրացուցիչ ուսուցման բնագավառում և ավտոմոբիլային տրանսպորտի բնագավառում Կողմերի իրավասու մարմինների կողմից կրթական գործընթացի որակին ներկայացվող պահանջներին համապատասխան կրթական գործունեության իրականացման ընթացքում ուսումնական հաստատությունների հնարավորությունների հաստատման ընթացակարգն է:

1.2. Սույն Կարգը սահմանում է միասնական ծրագրերով միջազգային ավտոմոբիլային փոխադրողների պատտրաստում իրականացնող բոլոր տեսակների ուսումնական

հաստատությունների պահանջները՝ մշակված մասնագիտական հմտությունների լրացուցիչ ուսուցման միասնական պահանջներին համապատասխան:

1.3. Ցանկի սահմանման նպատակներն են.

- կրթական ծառայությունների բարձր մակարդակի ապահովումը,
- ուսումնական գործընթացի որակի անկախ մասնագիտական վերահսկողությունը:

1.4. Ցանկի սահմանման ընթացակարգի միասնական սկզբունքներն են.

- օբյեկտիվությունը,
- իրավասությունը,
- հրապարակայնությունը:

1.5. Ցանկում ներառելու համար պարտադիր պայմաններ են.

- ուսումնական հաստատությունում լրացուցիչ մասնագիտական ուսուցման բնագավառում կրթական գործունեության իրականացման իրավունքի լիցենզիայի առկայությունը,
- դիմող ոսումնական հաստատությունների փորձաքննությունների արդյունքներով դրական եզրակացությունը:

1.6. Ուսումնական հաստատությունների փորձաքննությունը հանդիսանում է միջազգային ավտոմոբիլային փոխադրողների լրացուցիչ ուսուցման բնագավառում Կողմերի իրավասու մարմինների պահանջներին համապատասխանելու դրանց համալիր գնահատումը:

2. Փորձաքննության ընթացակարգի անցկացման կազմակերպումն ու կարգը:

2.1. Ցանկում ներառումը կատարվում է փորձաքննության դրական եզրակացության հիման վրա, որն անցկացվում է ըստ ուսումնական հաստատության դիմումի և ներկայացվում է դրա ղեկավարի կողմից՝ ըստ սահմանված ձևի (ձև 1):

2.2. Դիմումին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը.

ա) պետական գրանցման մասին հավաստագրի պատճենը,

բ) կրթական գործունեության իրականացման իրավունքի լիցենզիայի պատճենը (լիցենզիային կից հավելվածով, որտեղ նշվում է կրթական գործունեության թույլատրելի ուղղությունները),

գ) դասավանդվող կուրսերի, ուսումնական հաստատության նյութական-տեխնիկական բազայի, օգտագործվող կրթական-լաբորատորական բազայի և մանկավարժական կադրերի մասին տեղեկատվությունը (ձևեր 2, 3, 4, 5):

Փաստաթղթերի պատճենները պետք է ստորագրված լինեն ուսումնական հաստատության ղեկավարի կողմից և վավերացված լինեն կնիքով:

2.3. Փորձաքննության նպատակն է ուսումնական հաստատության հնարավորությունների գնահատումը միջազգային ավտոմոբիլային փոխադրողների պատրաստման գործունեության որակյալ իրականացումը կազմակերպման համար՝ միասնական ծրագրերի բավանդակության և որակի չափանիշներին համապատասխան:

2.4. Ուսումնական հաստատության փորձաքննության անցկացման նպատակով ստեղծվում է միջազգային ավտոմոբիլային փոխադրողների լրացուցիչ ուսուցման բնագավառում Կողմերի իրավասու մարմինների ներկայացուցիչներից կազմված փորձագիտական հանձնաժողով: Հանձնաժողոմի կազմը հաստատվում է միջազգային ավտոմոբիլային փոխադրողների լրացուցիչ ուսուցման բնագավառում Կողմի իրավասու մարմնի հրամանով: Փորձաքննության անցկացման ժամկետները սահմանվում են դիմումի գրանցման պահից և չպետք է գերազանցեն երկու ամիսը:

2.5. Փորձաքննության եզրակացության նախապատրաստման ընթացքում հանձնաժողովի նախագահը հանձնաժողովի անդամներին հանձնարարում է անցկացնել բոլոր ներկայացրած փաստաթղթերի փորձաքննություն: Անհրաժեշտության դեպքում հնարավոր է հանձնաժողովի անդամների մեկնումը ուսումնական հաստատություն:

2.6. Փորձաքննության եզրակացությունը հաստատվում է հանձնաժողովի նիստին՝ դրա անդամների ընդհանուր թվի առնվազն 2/3 մասնակցությամբ: Հանձնաժողովի որոշումը ձևակերպվում է հանձնաժողովի բոլոր անդամների ստորագրություններով կազմված արձանագրությամբ: Փորձաքննության եզրակացության կնքման պատճենն ուղարկվում է ուսումնական հաստատությանը:

2.7. Հանձնաժողովը կարող է մերժել ուսումնական հաստատությանը հավատարմագրման հարցում՝ պարտադիր նշելով մերժման պատճառը: Հանձնաժողովի բացասական որոշման դեպքում ուսումնական հաստատությունը կարող է ներկայացնել երկրորդ դիմումը մերժման պատճառը վերացնելուց հետո:

2.8. Հանձնաժողովի դրական որոշման դեպքում ուսումնական հաստատությանը տրվում է մասնագիտական հմտությունների լրացուցիչ ուսուցում իրականացնող ուսումնական հաստատությունների ցանկում ներառելու մասին հավաստագիր:

Նշված հավաստագիրը տրվում է անժամկետ՝ երեք տարին մեկ անգամ այն ստուգելու պայմանով:

2.9. Սահմանված պահանջներին ուսումնական հաստատության գործունեության արդյունքների անհամապատասխանության փաստերի հայտնաբերման դեպքում ցանկում ներառելու վերաբերյալ հավաստագիրը կարող է ճանաչվել ուժը վաղաժամ կորցրած: Այդ դեպքում ուսումնական հաստատությանը ներկայացվում է հավաստագիրը ուժը կորցրած ճանաչելու մասին որոշումը: Ցանկում ներառելու վերաբերյալ դիմումի կրկնօրինակը տվյալ դեպքում կարող է ներկայացվել ուսումնական հաստատության կողմից՝ ոչ շուտ, քան հավաստագիրն ուժը վաղաժամ կորցրած ճանաչելու մասին որոշումն ընդունելուց հետո:

2.10. Ցանկում ներառված ուսումնական հաստատություններն իրավունք են ստանում աշխատելու միասնական ծրագրերով՝ հաստատված միջազգային ավտոմոբիլային

փոխադրողների լրացուցիչ ուսուցման բնագավառում Կողմերի իրավասու մարմինների կողմից:

2.11. Միջազգային ավտոմոբիլային փոխադրողների լրացուցիչ ուսուցման բնագավառում Կողմերի իրավասու մարմինները ցանկում ներառված ուսումնական հաստատությունների մասին տեղեկատվությունը տրամադրում են ԱՊՀ մասնակից պետությունների՝ Համակարգող տրանսպորտային խորհրդի ավտոմոբիլային տրանսպորտի խորհրդին, որն ունի ԱՊՀ կազմակեպությունների միասնական գրանցամատյան, և տեղեկացնում են Կողմերի բոլոր իրավասու մարմիններին և տրանսպորտային կազմակերպություններին:

Ձև 1

ԴԻՄՈՒՄ

Միջազգային ավտոմոբիլային փոխադրողների մասնագիտական հմտությունների լրացուցիչ ուսուցում իրականացնող ուսումնական հաստատության կողմից ներկայացվող՝ ԱՊՀ մասնակից պետությունների ուսումնական հաստատությունների ցանկում ներառելու վերաբերյալ

ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ ներառել միասնական ծրագրերով միջազգային ավտոմոբիլային փոխադրողների մասնագիտական հմտությունների լրացուցիչ ուսուցում իրականացնող ուսումնական հաստատությունների ցանկում՝ հաստատված _____

_____

_____

(Կողմի իրավասու մարմնի անվանումը

_____

միջազգային ավտոմոբիլային փոխադրումների լրացուցիչ ուսուցման բնագավառում)

_____

(ուսումնական հաստատության անվանումը՝ ըստ կանոնադրության)

_____

Իրավաբանական և փաստացի հասցե, հեռախոս, ֆաքս, բանկային ռեկվիզիտներ)

Հավելվածներ_____

(թվարկել կցվող բոլոր փաստաթղթերի անվանումները)

Ուսումնական հաստատության ղեկավար _____ _____

(ստորագրություն) (Ա. Ա. Հ)

«_____»_____ 200__թ.

Ձև 2

Դասավանդվող առարկաների և ուսուցանվողների կոնտինգենտի մասին տեղեկատվություն

Հ/հ	Ուսուցանվողների կատեգորիա	Ուսուցանվող դասընթաց Անվանում, ժամերի քանակ	Քանի՞ մարդ է միջին հաշվով սովորում մեկ տարվա ընթացքում թվարկված յուրաքանչյուր դասընթացի ծրագրերով	Ի՞նչ փաստաթուղթ է տրվում ավարտելուց հետո (կցել փաստաթղթի նմուշը)

Ձև 3

Ուսումնական հաստատության նյութական–տեխնիկական բազայի մասին տեղեկատվություն

Հ/հ	Շինության տեսակը, հարկերը, Փաստացի հասցեն	Սեփականության ձևը (սեփականության իրավունքները, վարձակալություն և այլն)	Շինարարության տարեթիվը	Ընդհանուր տարածքը	Նախապատրաստման նշված ուղղությունների ուսուցման գործընթացի համար օգտագործվող ուսուցողական տարածքները (տարածք, լսարանի տեսակը)

Ձև 4

Օգտագործվող ուսուցողական-լաբորատորային բազա, ուսումնական ընցացքի տեխնիկական հագեցվածությունը

Հ/հ	Օգտագործվող ուսուցողական-լաբորատորային բազա	Տեխնիկական միջոցի տեսակը	Տեխնիկական միջոցի տեսակը, մակնիշը, մոդելը	Տեխնիկական միջոցի թաղարկման տարեթիվը	Սեփխանության ձևը (սեփականության իրավունքները, վարձակալություն և այլն)

Ձև 5

Ուսուցողական գործընթացն ապահովող մանկավարժական կադրերի մասին տեղեկություն

Հ/հ	Ա.Ա.Հ.	Դասավանդվող դասընթացը	Պաշտոնը	Կրթություն (նշել մասնագիտությունը)	Գիտական աստիճանը	Աշխատանքային փորձը, մանկավարժական փորձը	Երբվանի՞ց է դասավանդում նշված դասընթացը

Հավելված 3
«ԱՊՀ մասնակից պետությունների միջազգային
ավտոմոբիլային փոխադրողների լրացուցիչ
ուսուցման և մասնագիտական հմտությունների
պահանջների ներդաշնակեցման մասին» համաձայնագրի

ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ՁԵՎ

ԱՊՀ համապատասխան մասնակից պետության անվանումը և տարբերակիշ նշանը (1)	Միջազգային ավտոմոբիլային փոխադրողների պատրաստման բնագավառում իրավասու մարմինը (2)

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՈՂԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՍՏԱԳԻՐ

Հմ. …..

(2) …… սույնով հաստատում է, որ (3) …… ծնված ……,ծննդյան ամսաթիվ ……, հանձնել է որակավորման քննություն (տարի՝ ……, ամսաթիվ՝ ……) (4) մասնագիտական հմտությունների ձեռք բերման նպատակով՝ որպես միջազգային ավտոմոբիլային փոխադրումների կազմակեպման պատասխանատու անձ, ճանաչվել է մասնագիտական աշխատանքի համար որպես որակավորված պաշտոնյա անձ՝ պատասխանատու միջազգային ավտոմոբիլային փոխադրումների իրականացման համար:

Սույն հավաստագիրը հանդիսանում է մասնագիտական հմտությունների բավարար ապացույց՝ համաձայն «_____» _____ 200__ թվականի՝ «ԱՊՀ մասնակից պետությունների միջազգային ավտոմոբիլային փոխադրողների լրացուցիչ ուսուցման և մասնագիտական հմտությունների պահանջների ներդաշնակեցման մասին» համաձայնագրի, և նախատեսված է այդ բնագավառում մասնագիտիթյամբ աշխատող անձանց միջազգային տրանսպորտային գործողություններում ազատ մասնակցության ապահովման համար:

Տրված է …… (վայրը) (5) …… (ամիս/ամսաթիվ) (6)

Ատեստավորման հանձնաժողովի նախագահ՝ _____ _____ (7)
(ստորագրություն) (ստորագրություն)

Քարտուղար՝ _____ _____ (7)
(ստորագրություն) (ստորագրություն)

Կնիք (7)

1) ԱՊՀ մասնակից պետությունների անվանմանը համապատասխանող անվանումը, տարբերակիչ նշանը:

2) Հավաստագիրը տրամադրող միջազգային ավտոմոբիլային փոխադրողների պատրաստման բնագավառում ԱՊՀ մասնակից պետության իրավասու մարմնի անվանումը:

3) ԱԱՀ:

4) Քննության նույնականացումը:

5) Հավաստագիրը տալու վայրը:

6) Հավաստագիրը տալու ամսաթիվը:

7) Հավաստագիր տրամադրած իրավասու մարմնի ստորագրությունն ու կնիքը:

ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱՊԱՀՈՒՄԸ
Անկախ պետությունների համագործակցության

կառավարությունների ղեկավարների խորհրդի

օրակարգի 12-րդ կետի վերաբերյալ

2006 թվականի նոյեմբերի 24 **ք. Մինսկ**

ԱՊՀ մասնակից պետությունների միջազգային ավտոմոբիլային փոխադրողների լրացուցիչ ուսուցման և մասնագիտական հմտությունների պահանջների ներդաշնակեցման մասին Համաձայնագրի 2-րդ Հավելվածի 1.5-րդ կետի առնչությամբ կիրառվելու են Ղազախստանի Հանրապետության ազգային օրենսդրության դրույթները:

Ղազախստանի Հանրապետության
վարչապետ՝ **Դ. Ախմետով**

Օրակարգի կետ 12

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱՊԱՀՈՒՄԸ
ԱՊՀ մասնակից պետությունների միջազգային ավտոմոբիլային փոխադրողների լրացուցիչ ուսուցման և մասնագիտական հմտությունների առնչությամբ պահանջների ներդաշնակեցման մասին Համաձայնագրի 6-րդ հոդվածի վերաբերյալ

2006 թվականի նոյեմբերի « » **ք. Մինսկ**

Ռուսաստանի Դաշնության համար սահմանված նմուշի հավաստագրեր տալու և ճանաչելու իրավասություն ունեցող մարմինն է ավտոմոբիլային տրանսպորտի բնագավառում իրավասու մարմինը:

Ռուսաստանի Դաշնության
Կառավարության ղեկավար՝ **Մ. Ֆրադկով**